

Universitäts- und Landesbibliothek Bonn

Girk□ herdzuatsots□

Ter-Mkrtč'yan, Galowst

Vagharshapat, 1892

urn:nbn:de:hbz:5:1-12170

Goussan 2978

~~49~~

Wien no. 211 G. I. III

Wien, den 24. Juli 1890.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆԻ

*"Zeitschrift für Armenologie" herausgegeben
von dem Herausgeber*

Գ Ի Բ Բ Հ Ե Ր Չ Ո Ւ Ը Ն Օ Ց



(ԱՐՏԱՏՊԱԾ 1892 Թ. «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻՑ):

Վ. Ա. Գ. ԱՐՉԱԳԱՆ

ՄԱՅԻ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

1892

X

№. 401



Wien, den 24. Juli

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆԻ

Գ Ի Բ Բ Հ Ե Ր Չ Ո Ւ Ա Ն Ո Ց



(ԱՐՏԱՏՊԱԾ 1892 Թ. «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻՑ)

ՎԱԳԱՐՇԱԳԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՏՊԱՐԱՆՈՒՄ

1892

2978

*

unverändert erhalten. Am 24. d. Juli im Auftrage des Herrn Generals von Soltmann. General der Infanterie

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԱՄԵՆ՝ Տ՝ ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՅ:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

1883

Unter der Aufsicht der Regierung

* 1839

Umsatz der...

...

...

...

...

1835

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

...

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն .

Մայր-ցուցակի № 2005 ձեռագրում հանդիպում ենք 158 հերձուածների կամ հերձուածողների շարահարգութեան, իւրաքանչիւր հերձուածի համառօտ բացատրութեամբ: Գրուածքի հեղինակը, ժամանակը, թարգմանիչը, — որովհետև գրուածքն երևում է թարգմանական, — և թարգմանութեան ժամանակը անյայտ են: Եկեղեցու հարց երկասիրութեանց մէջ խուզարկելով այս գրուածքի նախօրինակը, մենք գտնում ենք, որ սա ուղղակի կամ անուղղակի կապ պէտք է ունենայ Սրբոյն Եպիփան Կիպրացու (Մ. դար) գլուխ-գործոց Panarium-ի կամ Հերձուածոց Գրքի հետ 1): Այդ երկասիրութեան մէջ Սուրբն Եպիփանը նկարագրում է մինչև Քրիստոս և Քրիստոսից յետոյ մինչև իւր ժամանակը երևեցած ութսուն այլ և այլ աղանգներ, ըստ իւր հասկացողութեան և զիւրահաւանութեան, և ուղղափառ վարդապետութեամբ հերքում է նրանց: Բայց Սրբոյն Եպիփանի Հերձուածոց Գիրքը ընդարձակ աշխատութիւն է, մինչդեռ մեր ունեցածը շատ համառօտ է և առանց հերձուածների հերքումների, որով և աւելի համապատասխանում է Սրբոյն Եպիփանի մի ուրիշ երկասիրութեանը՝ Anacéphaléose-ին, որը Panarium-ի համառօտութիւնն է:

cf. Ms. Armon
Paris 153, fol.
136 v

Ս. Եպիփանի Anchorat կամ Angyrotos գրութիւնն էլ պարունակում է մինչև 80 աղանգների յիշատակութիւնը և նմանապէս մի համառօտ Հերձուածոց գիրք է, որը կոչւում է նաև Հաւատոց Գիրք: Բայց ինչպէս ընթերցողը կարող է նկատել՝ մեր ունեցած Հերձուածոց գիրքը — այս վեր նագիրը չը կայ ձեռագրում: այլ մեր յատկացրածն է — ոչ թէ 80, այլ 158 աղանգների պատմութիւն է, ուրեմն և ոչ միայն Եպիփանի վերոյիշեալ երկասիրութեանց քաղուածք պէտք է լինի, այլ և յաւելուածներով ընդարձակուած: Պարզ երևում է, որ շատ աղանգների և աղանգաւորների անուններ կրկին անգամ են յիշուած, այլ և հայ թարգմանչից եղել են յաւելուածներ: Թէ արդեօք Չարբանալեանի յիշած Հոլովմունք չար աղանգոց հերձուածողաց կամ Բացատրութիւն բանից ութսուն հերձուածողաց — ը նոյն այս գրուածքն է, թէ աւելի ընդարձակ թարգմանութիւն Panarium-ի՝ չենք կարող ասել 2): Մեր մատենագարանի մի քանի ձեռագրերում գտնուած Որբանութիւն հերձուածողաց կամ Բանք հերձուածողաց կոչուած գրութիւնները, որչափով որ մեզ յայտնի են, կամ բոլորովին տարբեր բաներ են և կամ նոյն այս մեր հրատարակածի

1) Migne; Dictionnaire de Patrologie.
2) Հայկական թարգմանութիւնք նախնեաց, 1889 թ. Վենետիկ:

չնչին և սխալաշատ պատահիկներ (1)։ Այնպէս որ այս հրատարակութիւնը անուամենք միայն մի ձեռագրից, գրուած Կ. Պոլսում Փրկչական 1621 թուականին 2)։ պարզ և գեղեցիկ նօտր-գրով, սակայն սաստիկ շատ սղագրութեամբ և պատիւներով որով երբեմն դժուարանում է ուղիղ վերծանութիւնը։ Բնագրի հետ բաղդատութիւնը անշուշտ կը սրբագրէր շատ սխալներ, աղջատմունքներ, կը պարզէր մթին և կրճատ ասացուածներ և կորոշէր գրուածքի մէջ ժամանակի ընթացքում եղած յաւելուածները, որոնցից մի քանիսը բոլորովին ակներև են։ Պարզ է, օրինակ, որ Հոմերաբապտիստէք-ը Hémérobaptistes-ի աղջատուածն է (իւ է փոխանակ պէ՛ի), Սատառնաղացիքը Saturniliens է, Պասաղիանոսք-ը պէտք է լինի Մեսաղիանոսք (Messaliens) և այլն, և այլն։ Մենք ճշտութեամբ հրատարակում ենք մեր ձեռքում եղած ձեռագիրը, նրա ուսումնասիրութիւնը թողնելով մասնագէտ աստուածարաններին։ Մեզ աւելի հետաքրքրում է այն ազգեցութիւնը, որ ունեցել են այս և սրա նման գրուածքները մեր ազգային կրօնական կեանքի վրայ։ Չանագան հերձուածողներին վերագրուած զազրագործութիւնները, բամբառակ և անմիտ մեղադրանքները՝ Հայաստանում բարգուցին մեծ մասամբ Թոնդրակեցիների վրայ։ Այս մասին ունինք պատմական գրաւոր անտիպ փաստեր։ Միւս կողմից հետաքրքրական են թարգմանչի գործ գրած ազգային հին աւանդական անունները՝ Երան և Տոհմական գեւորի կոչումը, որ յիշեցնում են մեզ Եզնիկ Կողբացու Եղծ ազանգոցի մէջ յառաջ բերուածները, Մարէ, Շեթի կանանց և Արարացի Պօղի յիշատակութիւնները, թէև անախոսնիզմներով լի։ Մանիքեցիների երգմնաձևը, և այլն, և այլն։

Անցեալ անգամ Անանիա Նարեկացու Խոստովանութեան Գրի և այս անգամ այս թարգմանական գրուածքի հրատարակութիւնը մեր այն համոզման արդիւնքն է, որ «Արարատ»-ը իւր կրօնական—պատմական բաժինը մեծ մասամբ պէտք է յատկացնէ նախնեաց կորած համարուած կամ անտիպ մնացած երկերին և նրանց հետազօտութեանը, քիչ թէ շատ ծառայելով մեր Ձեռագրերի մատենադարանի հարստութիւնները երևան հանելուն և նրանց ժամանակի մաշող ժանիքներից ազատելուն։

ՄԻԱԲԱՆ.

1) Եպիփանի գլխաւոր երկասիրութիւնը ծանօթ էր և Պատմահօրր, որ մի վկայութիւն է բերում այդ գրքից, տալով դրան Յանգիմանութիւն Հերձուածոց անունը (Խորենացի Ա. 6)։

2) Թփին կենարարին .ՌՌԵ. և ի հայոց թմին .ՌԷ. գրեցաւ ի քաղաքն ի Ստամբուլ, ձեռամբ յոգնամեղ Սահակի, Արք աւկտիք ի սմանէ աղաչեմ յիշել զանիմաստ գծողս, և աստուած ողորմի ասել, զի թողցէ տէր զյանցանս մեր, ամէն։ Այս ձեռագրի մասին շուտով առիթ կունենանք աւելի մանրամասն գրելու։

ՀԵՐՁՈՒԱԾՈՂՔ ԵՐԵՒԵԼԻՔ ԱՅՍՉԱՓ ԵՆ ԵՒ ԱՅՍՈՒԲԻԿ՝ ԶՈՐ ՍԵՐՄԱ-

ՆԵԱՅ ՍԱՏԱՆԱՅ Ի ՄԱՐԴԻԿ:

Ա. Բարբարիամուք, որ կոչին խուժադուժք, սկսեալ յԱդամայ մինչև ի Նոյ, զի ոչ գոյր առաջնորդ և ամենայն որ ըստ կամաց իւրոց գնայր: 5

Բ. Սկիւթիամուք՝ ի Նոյէ սկսեալ մինչև ցաշտարակն և յապաղայ սկսեալ ի կողմանս Սկիւթացւոց, որ և Թրակաց(իք) անուանեցան: Սորա զվինս և զջնարս զիս պաշտեցին, ըստ խրատու զիւի ումեմն՝ Լըռիանդոս անուն: 10

Գ. Հելենիամուք(ք)՝ ի ժամանակացն Սերուքայ սկսեալ: Սորա ի ձեռն պատկերաց և նկարագրութեանց զանձինս սկայիցն կախարդաց պաշտեցին և աստուածացուցին ի խեցի և ի քարի և յոսկի և յարծաթ և (ի) պղինձ և յերկաթ և զարձան ի հեթանոսութիւն: Յետ որոյ և պատուեցաւ ի Պիթագորայ և յայլոց: 15

Դ. Յուդայիամուք, որ է հրէութիւն, յԱբրահամէ և Յուդայէ, որ է չորրորդ՝ որ ի Յակոբայ, յորոց սկսաւ թլիատութիւն և աճեաց, որք ասեն զՅուդայ զանյիշելին անուարտրս յաւիտենից տանջանացն՝ վասն մատնութեան տեառն, որ է հրէութիւն յայտնապէս: Վասն նոցա Պօղոս բարբառեցաւ ասելով. ոչ բարբարիամուք, ոչ սկիւթիամուք, և յուդայիամուք, այլ ամենայնի քրիստոս¹⁾: 20

Ե. Պիթագորացիքն, որ է հեթանոսաց հերձուածք, որք են գնացողականք: Բայց սա արգելոյր զոչս յաստուածոց՝ զչնչաւորս ի ճաշակելոյ, և ասէր. ի լուսոյ վեր՝ անմահ, 25

1) Առ. Կողոսացիս Գ. 11.

և անտի թ խոնարհ՝ մահկանացու, և ի փոխումն շնչաւորաց ի մարմնոյ մինչև յանասունս, և Վ. ամ լուել տայր աշակերտելոցն նորամտից, և յետոյ զինքն աստուած անուանեաց վասն իմաստութեանն:

Զ. Պղատոնացիք՝ զաստուած հիւզ և տեսակ անուանեցին, զոչխարհս ծննդական և անմահ, և աստուածային երիս մասունս ունելով՝ բանական, սրամտական, ցանկական. և զհամայն հասարակաց՝ ուր և կամեսցի որ խառնակեսցի, և զոգիս մարդկան փոփոխելիս ի մարմինս, և աստուածս բողբումն ի միջէ֊ օրինադրեցին:

Է. Ստոյիկեցիք՝ զմարմին զամենայն օրինադրեալ ասեն, և զդալի զաշխարհս զայս աստուած անուանեն, և ոմանք ի հրոյ զընթիւն նորա ասացին լինել, և անձն բնութիւն երկրի և երկնի, և այս զլուսաւորագ, և շունչ փոփոխելիս:

Ը. Եպիկուրացիք՝ զաշխարհս ինքնեղ ասացին և ոչ յաստուծոյ, և զտեսակս՝ անհաստ, և բարեպաշտութիւն՝ զուտելն և զըմպելն, և (ոչ) նախախնամութեան Աստուծոյ ասացին զարմանել զարարածս, այլ ըստ պատահման 1):

Թ. Թարմնրոտմոսք՝ որ կոչին Շամբուացիք. սորա հեթանոսք էին ի բարելացւոց և յաւուրս Սաղմանատարաց ի Պաղեստին: Եկեալ Շամբուացիք կոչեցան, որ է պահապանք, և ընկալան զօրէնսն Մովսիսի ի ձեռն Եզրի քահանայի, և ունին զհրէիցն կարգն, և խոստովանին զաստուած արարիչ գոյիցս, բայց երկիր պագաննն աստուծոյ ի հարկէ, զի զկուռս իւրեանց բերեալ ի յերկրէն իւրեանց թաղեցին ի Գարեղին և ի Գերսող, որ է ընդ հարաւ Երուսաղէմի, և զյարութիւն ոչ ընդունին, և ոչ զայլ մարգարէսն՝ բայց ի Մովսէսէ և ի գրոց նորա:

Ժ. Գոթոնացիք և Սերեսացիք՝ զոճնս կատարեն հրէարէնս:

1) 2. և նախախնամութեան Աստուծոյ ասացին զարմանալ:

- ժ.Ա. Եսնայիք՝ ոչ ումեք ընդիմանան վասն հաւատոյ, այլ որոյ որ պատահենն, ընդ նոսա տօնեն:
- ժ.Բ. Գորիթայիք՝ զնոյն կրօնս ունին, զի ի սամարացւոցն են, բայց զշարաթ և զթլխատութիւն պատուեն առաւել քան զՍամարացիսն, և շնչաւոր ոչինչ ճաշակեն, և ի պահս և ի կուտութիւն առաւել վարին, այլ և առ երեսս յարութեան հաւատան, և առանց հանապազ լուանալոյ ոչ կոչին արժանաւորք:
- ժ.Գ. Կրամատիկոսք՝ որ անուանին դպիրք, սորա զուանդութիւն ծերոցն ունին, ոչ յօրինաց՝ այլ յանձանց: Եւ առանց լուանալոյ ոչ ուտեն, և ոչ ըմպեն, և ոչ աղօթեն: Եւ ի հրապարակէ մտեալ՝ ոչ ննջեն առանց լուացման:
- ժ.Դ. Փարիսացիք՝ որ կոչին որոշեալք, կոչեն զինքեանս ընտիրս քան զամենայն մարդիկ, և պահեն երկիցս ի շաբաթու, և ամենայն հմայք և խորութիւնք ի նոցանէ ելանեն:
- ժ.Ե. Սագուկեցիք՝ որ կոչին անձնարդար, որք էին ի Սագուկայ քահանայէ և զամենայն կարգս ըստ հրէիցն ունէին, բայց զսուրբ Հոգին, և զհրեշտակս, և զյարութիւն ոչ ընդունէին:
- ժ.Զ. Համերաբախտիստէք՝ որ ասին նորա մկրտիչք, ամենայնիւ նման են հրէից, բայց ասեն՝ որ ոչ մկրտի հանապազ՝ ոչ ընդունի զկեանսն յաւիտենականս:
- ժ.Է. Ալիկենոսք՝ որ նման են հրէից և ընդունին զօրէնսն Մովսէսի, բայց զբազումս ի մարգարէից ոչ ընդունին:
- ժ.Ը. Նազօրացիք՝ որ կոչին ուխտաւորք, միս ոչ ուտեն և մինչ ի Մովսէս և յԱբրահամ ընդունին զնահապետան, և այլ ոչ ևս:
- ժ.Թ. Հերովդիանոսք՝ նմանք են հրէից և ի խրատուէ զիւաց Հերովդէի՝ որպէս Քրիստոսի՝ ակն ունին, և որ ինչ պատիւ է Քրիստոսի զայն նմա համարին:
- Ա.յս . ժ.Թ. հերձուած՝ յԱղամայ մինչև ի Քրիստոս:
- Ի. Սիմոնացիքն՝ ի Սիմոնէ մոգէ էին, յաւուրս առաքելոցն, Սամարացի գողով, որ ոչ ընդունին զյարութիւն՝ և զաշ-

խարհս ոչ ասեն աստուծոյ արարած: Ար և կին մի Լուսին անուանեալ շրջեցուցանէր և իւրն անուն Արեգակն գնէր, և յԱթէնս նկարել ետ պատկեր երկուցն ի պաշտօն, և զբախտն և զպատահմունս՝ պարգևեալ յԱստուծոյ՝ ըստ աստեղացն իշխանութեան գուշակէր ¹⁾, որպէս ի ծնունդս դանդաջէին Եգիպտացիքն և Քաղզէացիքն: Եւ կոչեն Շամրտացիք հայր, և հրէայքն Քրիստոս զնոյն ասեն, և Շամրտացիքն ըստ Աիմոնացւոյ վարին, բայց զաշխարհս ի հրեշտակաց ասեն արարեալ ²⁾:

ԻԱ. Սատառնազացիք՝ և սորա ըստ Աիմոնի աղանդին վարին և ասեն անձանօթ և ծանօթ աստուած:

ԻԲ. Բասիլիդէսք՝ ի Բասիլիդեայ ուսեալք, որ աշակերտ էր Աիմոնացւոց, բայց Յկե երկինս ասեն և անուն զնեն նոցա հրեշտակականս և նայնքան աստուած ասեն ի նոսա:

ԻԳ. Նիկողոսացիք՝ ի Նիկողոսէ մոյրեցան, որ ընտրեցաւն ի սղասաւորութիւն այրեաց, որ յետս կալով ուսոյց զազրագործութիւն իւրոց աշակերտացն, զի ունէր կին գեղեցիկ, ըստ որում նախանձէր, և ածեալ ի հրապարակ եթող զնա՝ ում կամիցի ամուսնանալ: Բայց ոչ նա և ոչ զստերք իւր ընդ ումեք ամուսնացան: Եւ զՍառեղկիայ և զՊոռնիկիայ և զայլոց բարբարոսայ վարս և զկարգս եմոյժ յեկեղեցի:

ԻԴ. Գնատիանոսք, սորա զնորին զօշաքաղութիւն և զպտեղութիւնս գործեն, որ յեգիպտոս փարաւոնացիք կոչին և ի վերին կողմանս՝ Սակոնզացիք և առ ոմանս՝ Զաքէացիք: Եւ ոմանք՝ կողէանոսք, և ոմանք՝ Բորբորացիք: Եւ սորա ամենեքեան ի Բաբելոն պարծին:

ԻԵ. Կարպոկրատիանոսք՝ որք ի Կարպոկրատէ ասիացոյ ա-

1) 2. Լուսին, Արեգակն և աստղ բառերը գաղափարագիր:

2) 2. «գուշակէր, որպէս ի ծնունդս դանդաջէին Եգիպտացիքն և Քաղզէացիքն և կոչին Շամրտացիք հայր...»:

դանդոցն՝ որ ուսոյց զամենայն աշակերտիս անխոր
գործել և ասաց՝ որ ոչ կատարէ զկամս զփուսոցն ոչ կարէ
ի վերին երկինս անցանել: Եւ ասաց՝ թէ Յիսուս շունչ
իմանալի ընկալաւ և ապա գիտաց զվերինսն պատմել և
թէ որ զբանն Քրիստոսի պահէ՝ հաւասար նմա լինելոց է,
և զյարութիւնն ոչ ընդունի և պատկերս Յիսուսի արա-
րեալ, և Պօղոս նոցա ¹⁾ և Հովերոնէս ի ծածուկ՝ որոց
խունկն ծխէր և երկիր պագանէր ի Հռոմ:

ԻԶ. Կերենթիանոսք և Մերենթիանոսք, որք են հրէայք, և
պարծին ի թլփատութիւն, և զաշխարհս ի հրեշտակաց աս-
տացին լինել, և զՅիսուս յառաջագիմութեամբ ասեն աս-
տուածացեալ:

ԻԷ. Արիանայիք՝ նման կերինթացւոցն ասեն, և Սամաստա-
ցիքն նմանեալ կեսացւոյն են՝ որք ասեն զՅիսուս Քրիս-
տոս ստեղծե(ա)լ (դ)երկինս ²⁾ և զհոգին սուրբ, և զգե-
ցեալ միայն ասեն զմարմինն Ազամայ Քրիստոսի և ոչ միա-
ւորեալ ընդ անարատ աստուածութիւնն, և զարձեալ մեր-
կանալ և զգենուլ ի գալստեանն, և զվարս հրէից ըն-
դունին ³⁾, և զաւետարանն և զառարեալսն ընդունին,
բայց զառանց վկայութեան թուղթանն ոչ ընդունին, և
ասեն զնա մարդկային մտօք ասացեալ, և ոչ խոստովա-
նին ի նմա բնակեալ զՔրիստոս: Ի մնոյ գարշին և զջուր
որպէս զաստուած պատուեն:

ԻԸ. Վաղէնտիանոսք՝ զօրէնսն Մովսիսի և զյարութիւնն ոչ
ընդունին, այլ սակաւ բանս, որ իւրեանց առաստեղարան
պատշաճի՝ ընդունին: Լ. յաւիտեանց ⁴⁾ անուանս ասեն՝
արուաց և իգաց, և զամենեսեան զնոսա ի վերին հօրէն

1) 2. «Պղօսնց»?

2) 2. երկինք բառը գաղափարագիր:

3) Ըստ մեզ պէտք է կարգալ՝ ունին:

4) = 30 յաւիտեանց:

ծնեալ ասեն, և աստուածս անուանեն զյաւիտեանս: Եւ ունին գիրք մի՝ զՍիմոն կախարդի, որում Պրակս Առաքելոցն կոչեն, և զՔրիստոսէ ասեն թէ մարմին յերկինս զգեցաւ և որպէս ընդ խողովակ ինչ ընդ կոյսն անցաւ և ոչինչ աւ ի նմանէն:

ԻԹ. Սեկունգացիք զՎաղէնտիանոսացն զպղծութիւնն վարին, բայց զերկաթ առաւել պատուեն:

Լ. Պողոմացիք զՎաղէնտին ունին, և զձայնս հաւուցն հմայեն ևս:

ԼԱ. Մարկիոնացիքն. Մարկիոնոս այս փախստակից էր: Հաղարթոս. Բ. սկզբունս ասէ, և յարութիւն ոչ ընդ ունին և ի՛Ը. յաւիտեանս ասէ:

ԼԲ. Կողարբիանոսք զՄարկիոնին ունին, բայց ՚Ը. յաւիտեանս աւելի ասեն:

ԼԳ. Հերակլիանոսք՝ որ զնոյն ՚Ը. առապելաբանեն, և զՄարկիոնին և զՎաղէնտին(ին) և զայլ բազում հերձուածս: Եւ լուանան ապրսամ աղով և ջրով:

ԼԴ. Ուփիտեանք՝ որ են օձախաղացք, որք զօձս փառաւորեն որպէս զՔրիստոս, և ունին բազում օձս ընդ ինքեանս ի սասպատս՝ ի պաշտօնս իւրեանց:

ԼԵ. Կայիանոսք՝ զօրէնան Մովսիսի բամբասեն և որ նմա ետ զօրէնան, և զօրինազանցսն պատուեն, և զկայէն փառաւորեն, բռնաւոր զօրութիւն ունել ասեն նմա, և զՅուդայ մատնիչ՝ չաստուածոցն անուանեն, և զկորիս և զԻագան և զՍողոմոնցիս:

ԼԶ. Արքունիաւէք՝ որ ասին իշխանականք, սորա բազում իշխանութիւնս խոստովանին արարածոց և ի պիղծ տօնս իւրեանց գարշելի իրաց հաղորդին, որ զազրալի է ասելն՝ զապահարն կանանց: Եւ զհին կտակարանս ուրանան և զյարութիւն:

ԼԷ. Կերդիանոսք՝ ի Կերդինոսէ ընկալեալ զանուան(ա)կոչութիւնն, որ յԱսորոց մինչև ի Հռոմ՝ ձգեաց զսղանդն իւր: Բ. սկզբունք քարողեաց հակառակս և զՔրիստոս արա-

րած ասաց, և զյարութիւն ոչ ընդունի, և մասամբ ինչ վարի օրինօք:

ԼԸ. Սեթիանոսք. սորա զՍէթ փառաւորեն և ասեն զնա ի վերին մօրէն ծնեալ, զի յետ սպանմանն Աբէլի ոչ ասեն Աշամայ ամուսնանալ ընդ Եւայի, այլ ի յերկնային մօրէն ասեն ստացեալ զՍէթ, որ ինմանէ կարգի ազգ մարդկան: Եւ ոմանք ի նոցանէ Պարկեշտագոյնք անուանին. ծառ կենաց զՊառաճայ մայրն անուանեն՝ խոստովանել և ամուսնանալ ¹⁾ ի զրախօին, զոր և յանցումն կոչեն:

ԼԹ. Մարկիանոսք. Մարկիանոսս այս Պոնդացի էր՝ եպիսկոպոսի որդի, որ ապականեաց զկոյս և փախեալ ի Հռոմ, զի հայրն եհան զնա յեկեղեցւոյն: Եւ սա խնդրեաց ապաշխարութիւն և ոչ գտաւ. դարձաւ և եղև հակառակ եկեղեցւոյ և ասաց . Բ. սկզբունս՝ բարի և չար: Եւ զնոր կտակարանս օտար ասէ յօրինաց և զյարութիւն ուրանայ: Եւ որչափ մեղանչէ՝ մկրտիլ պարտ է ասէ, և թէ դք երախայ մեռանի՝ զայլ ոք մկրտել յանուն նորա, այլ և կանանց հրամայէ մկրտութիւն առնել:

Խ. Առկիանոսք. սորա ըստ Մարկիոնի ազանդին վարին՝ և աւելի:

ԽԱ. Ապեղիանոսք. սորա ըստ Մարկիոնի չարագործեալ, բայց զսկիզբն մին ասեն, զի մինն աստուած ասեն, և նա արար այլ աստուածս, և արար աստուած մի, որ չար գտու, և նա արար զաշխարհս:

ԽԲ. Սևերիանոսք. սա զգինի խոտէ և զորթ՝ ասէ, ի վիշապէ բնութենէ արեան կաթիլ, և երկիր բուսոյց զնա: Եւ զկինն ի բաց մերժէ, և ասէ թէ դասակողմանն գասու է, այսինքն՝ զիւաց: Եւ ընդ արուս խառնակին անխտիր, և գիրս ունին ի ծածուկ, որ զհին և զնոր կտակարանս անարգէ:

ԽԳ. Տատիանոսք. սա աննդակից էր Յուստիանոսի մարտիրոսի

1) 2. խոտիւլ և ամուսնալ:

և զհետ կատարման նորա անկաւ յազանգն Մարիինի:
ԽԳ. Եսկրիանոսք՝ որ կոչին ժուժկալս. սորա ի Տատի(ա)նսուէ
հերձուածոյն են, և զամուսնութիւն խտտեն, և շնչաւոր ինչ
ոչ ուտեն, և խաշն և արջաւ՝ որձ և էգ ունին: Եւ զմարմ-
նական կիրս Աստուծոյ Բանին ոչ ընդունին, և մանաւանդ
զերկիւղն, և զքրտունսն, և զչարչարանսն սոսկ աստուա-
ծութեանն տան, և ոչ միաւորեալ անօրէնութեանն, և են
սորա աստուածաչարչարք: Յայսմ ազանդոյ են և Ապողինա-
րիաքն կոչեցեալ:

ԽԵ. Մոնտանացիք և Փուլգացիք. սորա զնոր և զհին օրէնսն
ընդունին, բայց զմարգարէսն ոչ ընդունին և ի Մոնտանոս
պարծին և ի Պրիսկիլիէայ:

ԽԶ. Պեկուզացիք. Պեպուլիա¹⁾ գեղ է ի Գաղատացւոց աշխարհին
և նորա կոչեն զնա աստուածային Երուսաղէմ²⁾, և քահա-
նայս զկանայս կացուցանեն: Բակաձև նստուցանեն զգլխա-
ւոր կանայսն և մանուկ տղայ խոցոտեն՝ ձգելոյ ի միմեանս,
և առ ոյ մեռանի՝ նա է նոցա քահանայ: Եւ յորենէ ման-
կանն հաց արարեալ տան ի հաղորդութիւն պատարագաց
և զոսկերսն թաղեն՝ կամ ի բարձր տաճարի՝ առ
երգս, կամ ի բարձր լերինս: Եւ յորժամ խօսին ընդ
ումեք կամ երգնուն՝ զձեռս ամբարձեալ ասեն. Միա-
ծինն, Բարձրեալն, որ ի վեր է քան զամենայն: Եւ ա-
սեն՝ Տիտղէ կամ Պրիսկիլիէայ յղացեալ ծնաւ (զ)Քրիստոս ի
Պեպուղայ: Եւ զնա իգական կերպարանս առասպելաբանեն:
Ու՛ ին զհին և զնոր կտակարանս՝ ըստ իւրեանց կամացն
փոխաձևեալ:

ԽԷ. Չորեքտասանականք. սորա ի տարւոջն •Ա• օր զատիկ կա-
տարեն՝ լուսնի •ԺԳ•-ն զինչ և պատահէ օրն, և զչորեքշա-
բաթին չորեքտասան կոչեն: Երկրորդ զատիկ և զանար-
ժան օրէնսն թողուն մինչև այլ նոյն զիպեսցի: Իսկ մերս՝

1) 2. յ ե է մ:

2) Թերևս պէտք է կարգալ՝ Պ ե պ ու զ ա ց ի ք և Պ ե պ ու զ ի ա :

ըստ առաքելական կանոնին՝ եթէ ոչ ջերմն ելցէ ի սեղանն
և նոյն ժամայն ծախեսցի՝ ոչ է ընդունելի: Բայց ի Նիկիայ
ժողովն կանոնեցին յ.Բ. ճրագաւուրսն մասն ինչ թողուլ
Հիւանդաց և տղայոց և այլոց ևս:

ԽԸ. Ողորհնոսք, զորս անբանս կոչեմք: Սոքա զՅովհաննու աւե-
տարանն և զՅայտնութիւնն ոչ ընդունին:

ԽԹ. Աղամիանոսք, սոքա զԱղամ կենդանի ասեն, և արք և
կանայք մերկ ժողովին յեկեղեցին: Եւ զհաւատացեալ աւա-
զակն՝ ասեն թէ՛ Աղամ էր, և զեկեղեցին կոչեն՝ գրախոս, և
զինքեանս՝ արեղայս և կուսանս, և առ երեսս զամուսնու-
թիւնն ոչ ընդունին:

Ծ. Սամսենացիք, սոքա որ են առաջին Եկլեսացիք սուրբ (ք)¹⁾,
բնակեալ յԱրարիայ՝ ընդդէմ Մեռեալ ծովուն և են խա-
բեալք²⁾ յԵղքմայէ սուա մարգարէէ: Եւ զՄարթուայ և
զՄարթայ կանայք առաջնորդ իւրեանց ազանդոյն աստուած-
կարծեն և ի գոգ նոցա երկրպագեն ³⁾ զցանկութիւն պաշ-
տելով, ըստ որում և Խոնացիքն:

ՄԱ. Թէոդիանոսք, սոքա ի Թէոդոսէ սկիւթացւոյ խարեցան,
որ կայր ի Բիւզանդիայ, երևելի ուսմանն հեթանոսութեան,
և ընդ քրիստոնեայս ըմբռնեցաւ ի հալածմանն և յորժամ
նոքա կատարեցան՝ երկուցեալ ի տանջանացն, սոսկ մարդ-
ասաց զՔրիստոս ըստ կամաց թագաւորին:

ՄԲ. Մելքիսեդեկացիք, սոքա զՄելքիսեդեկ ոմն ծեր պա-
տուեն՝ Աջակողման Զօրութիւն կոչելով, և ոչ մարդ լոկ
այլ ի վեր քան զմարդ, և յանունս այս ածել համարձա-
կին զամենայն մարդիկ:

ՄԳ. Բարդեճանեցիք, Բարդեճան այս ի Միջագետս էր ուղիղ
վարուք և յետոյ փոխեցաւ ի Վաղէնտիանոսի հերձուածն:

ՄԴ. Նեստիանոսք, սա էր ի Սեմրնեայ ասիացւոց և կառօք

1) 2. «ԵՔլէսացիք, սբ, բնակեալ...»

2) 2. «խաբլք յեղքմայէ...»

3) 2. «երկրպագիցեն»:

- չրջէր, և զՔրիստոս ասէր՝ հայր և որդի (և) հոգի սուրբ,
և ասէր զինքն Մովսէս և զեղբայրն իւր՝ Ահարոն:
- ԾԵ. Վաղէնտիանոսք, սա ի Բակեթոն բնակէր, որ է յԱրա-
րիայ: Խոստովանին զՔրիստոս մարդ սոսկ և առաքինու-
թեամբ աստուածացեալ և յաստիճան որդւոյ աստուծոյ
փոխեալ, ոչինչ առաւել քան զԻսրայէլ¹⁾, զի և նոցա կոչե-
ցաւ որդի: Եւ չարաչար իմանալով զգիրս՝ հաստատեն զա-
զանգս իւրեանց ի գրոց, և զօշաբաղութիւնն առանց պատ-
ժոյ համարին: Սոցա պարկեշտագոյնքն ամենայն կուրս են,
զի ախտից ոչ կարեն յաղթել:
- ԾԶ. Կաթարիանոսք, որ կոչին սուրբք, սորա զհաւատովանո-
սաց հերձուածն ունին: Զապաշխարութիւն ոչ ընդունին և
զերկրորդ ամուսնութիւն խտան:
- ԾԷ. Անկելիէ, որ թարգմանին՝ Հրեշտակականք: Սորա պար-
ժին հրեշտակական ունելով զվարս և զհրեշտակս փառա-
ւորել:
- ԾԸ. Ապոստոլիկէ, որ կոչին՝ Առաքելականք: Սորա ի կողմանցն
Իպիսոզիեաց են և աղօթս ընկերօք ոչ ընդունին, այլ առան-
ձինն, և այլարանութեամբ աւելի քան զարժանն իմանան:
- ԾԹ. Բելիանոսք, սորա զչարչարանս միածնին հօր և հոգւոյն
գնեն ոչ հաճութեամբ՝ այլ բնութեամբ:
- Կ. Որ(ո)գինացիք, սորա յԱրոգինի ումեմնէ զազրագործէ
խաբեալք՝ զմարմինս ապականեն երևելով իբրև զպահողս:
- ԿԱ. Միւս Արոգենացիք, այս Արոգինէս աղամանգ կոչեցաւ,
ըստ առաջագոյն հռչակեալ իմաստութեանն և մարբու-
թեանն համազիր, և յետոյ ուրացեալ զյարութիւն մեռե-
լոց՝ և զՔրիստոս ստեղծուած ասաց, և զսուրբ հոգին
զրախս և յերկինս:
- ԿԲ. Պօղիանոսք, Պօղիանոս(ս) այս էր Սամոստացի: Սա նախ
անուանէր զՔրիստոս անսկիզբն, իսկ յետոյ ի Մարիամայ
ասաց սկսեալ և յառաջադիմութեամբ հաճոյացեալ աստու-

1) 2 զէլ.

ծոյ: Եւ երկրորդ գալուստ զի կուսէն 1) երեւումն առայ,
 և որ յառաջ ասացաւ զնմանէ ի մարգարէիցն, ասաց, չէ
 ստոյգ, և թէ՛ որ ասաց Արասցուք մարդ և իջցուք և խառ-
 նակեացուք զյեզուս նոցա՝ զիւրական խորհուրդն յայտնեաց,
 ասէ, և ոչ առ անձնաւորութիւն: Եւ սորա վասն մեռելոյ
 պատարագս ոչ ընդունին և ոչ կատարեն, զի ապականացու
 և հողեղէն բնութեանս նորոգութիւն ոչ խոստովանին: Եւ
 յարութիւն զանումն ասեն և յանուն աստուծոյ պատա-
 րագ մատուցանեն, և որ յանուն լուսաւորացդ և թէ՛ Տօն
 կոչեալ զիւր: 2) Սորա զբարեխօսութիւն սրբոցն ոչ ընկալան
 և ոչ զՔրիստոս յարուցեալ ի մեռելոց, և պահեն զշաբաթս
 սուրբ քառանորդացն և ծովանան ի շաբաթու և ի կի-
 րակէի: Նմանապէս սորա ի խորհուրդն ջուր խառնեն և
 երգնուն յարեգակն:

ԿԳ. Մանիքեցիք. սորա Մանեայ պարսկի աշակերտք էին և
 պաշտեն զարեգակն և զլուսին և զաստեղսն: Եւ երգնուն
 յարեգակն և ասեն՝ Առսիկ արևիկ քաղցրիկ, լի՛ ես տիեզե-
 րօք: Զի Քրիստոս զարեգակն խոստովանին և զիւաց եր-
 կրպագեն և զՔրիստոս կուսիւ երևեալ և խաչեալ ոչ ըն-
 դունին: Բ. իշխանութիւն ասեն՝ չար և բարի և զհին
 կտակն հայհոյեն:

ԿԴ. Յերակացիք՝ որ Յերակայի քաղաքէ եգիպտացւոց Ղևոն-
 տէ, որ հին և նոր կտակարանօք վարին և մարմնոյ յարու-
 թիւն ոչ ընդունին և յամուսնութենէ հրաժարին իբրև
 զճգնաւորս: Բայց ճգնաւորն այն է, որ գինս տան և խառ-
 նակին և զաղջկունս, որ ի չափ հասեալ են՝ այրիս ա-
 նուանեն:

ԿԵ. Մելեոփանոսք. սա նախ աշակերտ էր Պետրոսի եպիսկոպո-
 սին աղէքսանդրացւոյ և ապա՝ խոտորեալ ի հալածանացն՝
 ընդ Արիոսի միաբանեաց:

1) 2. «զի կուսէն»:

2) Թերևս՝ Թէտօն կոչեալ գիւրի:

- ԿԶ. Արիանոսք. սա զորդին աստուծոյ տրարած ասաց և զսուրբ
Հոգին՝ ստեղծուած: Եւ զմարմին միայն, ասաց, փրկին (ի)
Մարիամայ առեալ և զշունչ, և զառնացի անդամն ստորև՝
նչ: Եւ սա էր երէց Աղէքսանդրի¹⁾ և Վաղէսի ամբարիշտ
թագաւորի վարդապետ:
- ԿԷ. Աղղիանոսք. սոքա վարուք ըստ կաթուղիկէ եկեղեցւոյ
վարին, բայց ի վանս ուրեք ոչ բնակին: Աւնին և կարգս ինչ
ի ծածուկ զօշարաղութեան և ընդ մեզ ոչ ազօթեն: Եւ
պատուեն զօդս և զպտուղս, և յորժամ ի մի վայր ժողովին
ի խորհուրդս՝ զաստուած ոչ յիշեն, այլ զհօղմ և զտոհ-
մականս, և զիւր ումեմն զոհ մատուցանեն՝ Երան և Տոհմա-
կան կոչեցեալ անուն: Եւ զատիկ ընդ հրէայս կատարեն, և
զամենայն բարերար իւրեանց՝ յանամոց և ի գաղանաց՝
պաշտեն: Եւ զեպիսկոպոսունս և զքահանայս մեր բամբասեն
վասն ընչասիրութեան:
- ԿԸ. Փոտիանոսք. Փոտինոսս այս ի Սերբայ էր, որ ի սերմանէ
ասաց ծնեալ զաստուած Բանն ի Մարիամայ ըստ Պօղոսայ ա-
նօրէնութեանն, զմարմին տեառն ապականացու, և այսա-
հար զառաքեալն,²⁾ որում ոչ գոյ թողութիւն:
- ԿԹ. Մարկեղանոսք. Մարկեղոսս այս յԱնկիւրեայ Գաղատիոյ
էր և յանդիմանեալ ոչ եկն յուղղութիւն, քանզի յառաջ
Սաբելեան էր, այլ և աշակերտք նորա ի նմին կային: Սոքա
զմարմին Տեառն յարեգական ասեն եղեալ:
- Հ. Հոմերիանոսք, որ ասին՝ կէսք յարիանոսացն: Սոքա ըզ-
Քրիստոս յինքենէ ասեն ստեղծեալ, և որդի անուանեն զնա
վասն մերձենալոյ չարչարանացն նորա ի հայր, յորմէ ար-
գեօք համարելի է կալեալ վճարումն, կամ որ բաւականու-
թեամբ կայր, կամ խնամօղին բոլորեցունց աջոյ աստուծոյ,
զի նմա և եթ է ձեռնհասութիւն: Եւ յեղակարծումն
և առանց միջոցի զարմանալիս երևեց (ուցա) նէր, որ մշտըն-

1) Ա յսինքն է՝ Ա զ ե ք ս ա ն դ Ր ի ո յ :

2) 2. զ ա ռ ք լ ն. պէտք է կարգալ զ ա ռ ա ք ե ա լ ն, թերևս և՛ զ ա-
ռ ա ք ե ա լ ս ն:

ջեհնաւորեալ էր 1) յուսահատելոցն վայելչութենէ, և ընդ եղիկէին պարարկեալ տարակուսութեամբ շնորհեալ մխիթարութիւն ապաստանութեան:

ՀԱ. Պենէմաստոսք՝ Բարիոք ասին 2), բաց զհոգին հայհոյեն, և ոչ ասեն զնա յաստուածութենէն անպառ թղխումն, այլ ըստ շնորհաց յաջողութեան ստեղծեալ սրբաւորական 3) զօրութիւն:

ՀԲ. Միւս Արիանոսք. սա Պանտացի էր, երէց Ստաթէ եպիսկոպոսի և ընդ Արիանոսք կամակից եղեալ: Եւ զի ոչ որ կացոյց զնա եպիսկոպոս՝ բազում ինչ հակառակ եկեղեցւոյ կարգեաց: Աչ է պարտ, ասէ, վասն մեռելոց պատարագ առնել, և ոչ պահել զուրբաթ և զչորեքշաբաթ: Եւ զսուրբ քառասներորդն և զզատիկն արգելոյր ի կատարելոյ. զմիս անխտիր հաջէ 4) ուտել յամենայն աւուր, և ի վափկութիւնս հեշտանալ: Պահք այն է, ասէ, զի իւր կամօք որ պահիչէ, և ոչինչ կարգաւորել աւուր, և զի՝ չեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք, և՝ ոչինչ աւելի է եպիսկոպոս քան զերէց:

ՀԳ. Աւէտիանոսք, որ յԱւէտ 5) կիլիկեցւոյ՝ եղեալ ստրկաւագ ի Գէորգայ եպիսկոպոսէ և խոտորեալ յազանգն Արիանոսաց: Սորա զերեքշաբթի խոտեն և ի նմա ասեն եղեալ զչար:

ՀԴ. Եւնոմիանոսք. սորա յԱւէտիանոսէ և ի նորին աշակերտէ մոլորեալ՝ օտար ասեն զՔրիստոս և զհոգին յաստուածութենէն: Ասեն աստուած՝ այլ փոքրագոյն, զի ոչ ասէ հաւատարի 6) հօր յէութեանն: Եւ որ յայլոց հերձուածոց գան առնոսա՝ դարձեալ մկրտեն, և որ յԱրիանոսացն գառնան առ

1) 2. մշտն ջնւրլէր.

2) 2. « Եսեն ».

3) 2. սրբւրկն.

4) Ա յսպէս 2. ում՝ այսինքն՝ հաջում է (շան պէս) = հրամայում է, Թերևս կարելի է կարգալ և՝ հաճէ, այն է՝ հաճութիւն է տալիս:

5) 2. « յաւէտ ».

6) 2. « հաւատար ի հօր ».

- նոսա՝ գլխիկայր մկրտեն: Եւ զարուամուլութիւն, և զպոռ ընկութիւն, և զայլ մեղս ոչինչ համարին, զի հաւաստ միայն խնդրէ աստուած՝ ասեն:
- ՀԵ. Դեմիւրիտք, որ ասին Ապողինարիտք, որք ասեն՝ հոգի և միտք ոչ էառ Տէրն:
- ՀԶ. Անդիտիրս Մարիամիգէ, որ կոչին՝ Դիմամարտք Մարիամու, զի ասեն թէ յետ ծնանելոյն զՔրիստոս ամուսնացաւ ընդ Յովսէփայ:
- ՀԷ. Մարիամիտք. Սորա յամի միանգամ կարգեալ են իորտիկս ինչ մատուցանել յանուն նորա, որոց անուն եղաք՝ Խորուկարարս:
- ՀԸ. Պասաղիանոսք, որ ասին Աղօթականք: Մերձաւորք են սորա ամենայն հերձուածողաց հեթանոսաց:
- ՀԹ. Արտեմոնացիք. եղծանէր զամենայն գիրս և նորս գրէր:
- Ձ. Աիմոն և Կղէարթոս՝ ոչ ընդունին զմարգարէական գիրս, և ոչ ասեն զաստուած արարիչ և ամենակալ, այլ ի հրեշտակաց զոմն, և ոչ խոստովանին զաստուած Բանն ծնեալ ի Մարիամայ: Սորա առ Պօղոսիւ էին:
- ՁԱ. Այեգիոս ¹⁾. Սա ասէ թէ աստուած՝ որ ստեղծ զմարդն, անձն և պատկերս զմերս ունի, և թլխատութիւն առաջօք ասեն և ոչ ճշմարտութեամբ:
- ՁԲ. Միւս Սեթիանոսք, որ պատուեն զօձս և ասեն, թէ բարի խորհեցաւ վասն մեր, և աստուած նախանձեցաւ ընդ մեր բարին և անէծ զնա, վասն որոյ պաշտեն զօձն:
- ՁԳ. Կասիանոսք, որ զմաշիէ պատմուճանն՝ զմարմինս ասեն:
- ՁԴ. Սամսիտք, որ զարեգակն պաշտեն և ջրոյ սպաս տանին և այլ բազում սուտ աւանդո ունին:
- ՁԵ. Պռոսէքիտք, որք ասեն՝ հաւատովք և բարի գործովք հնար է յարքայութիւնն գնալ, առանց մկրտութեան:
- ՁԶ. Վաղէնտիանոսք՝ Բ. արարիչ ասեն՝ բարոյ և չարի. զհին

1) Կարծեմ ուղղագոյն՝ Այեգիոս = Audius.

գիրսն չարին ասէ և զնորս՝ բարոյն, և յանգնողոց և ի լու-
թենէ գոյացեալ զաշխարհս:

ՁԷ. Այլ վաղէնտիանոսք. Բ. որդիս ասէ՝ զմինն բնութեամբ և
զմիւս(ն) շնորհօք, և զմարմինն յերկնից ասէ բերեալ:

ՁԸ. Միւս Արտեմոն՝ շուան, սոսկ մարդ ասէ զՔրիստոս և
զչարչարանսն՝ սոսկ մարդոյ, և ոչ աստուածախառն մարմ-
նոյն, որ անբաժանելի միաւորեցաւ ընդ անապակ¹⁾ աս-
տուածութեանն: Եւ վասն այսորիկ ուրացաւ զփրկական
ձայնն ի սրբասացութեանն՝ պատճառանօք երրորդութեանն:
Վասնորոյ անխտիր օրինադրեաց ճաշակել զսուրբ խոր-
հուրդն և ոչ սրբութեամբ, զի ոչ աստուծոյ՝ այլ սոսկ մար-
դոյ մարմնացելոյ:

ՁԹ. Փանէս՝ ասաց վասն հոգւոց մարդկան, թէ յերկինս էին
և յերկիր անկան, վասն զի մեզս արարին:

Ղ. Աստերոս՝ զգրախոն իմանալի ասաց, և ոչ զգալի, և
ոչ շօշափելի:

ՂԱ. Աբիոնացիք՝ զառաքելոյն Պօղոսի զթուղթսն ոչ ընդունին
և կոչեն զնոսա օրէնս խտորնակս, բայց զշաբաթ և զայլ
խտրութիւն հրէաբար ունին:

ՂԲ. Կեղրոն անօրէն՝ ասաց, թէ աստուած որ յաւիտենից
քարոզեցաւ ոչ է հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի
սա յայտնի է, ասէ, իսկ նա ոչ է յայտնի: Եւ ի միրտելն՝
ասէ, յանուն հօր ամենայնի որ ոչն ճանաչի, և յանուն
մօրն ամենայնի, և յանուն Քրիստոսի:

ՂԳ. Փռի(ւ)գացիք՝ մի անձն ասեն զաստուած և .Գ. անուն:

ՂԴ. Արաբիանոսք՝ զհոգին մեռանել ասեն զկնի մարմնոյն:

ՂԵ. Լամբատիսանոսք՝ զսքեմաւորացն պոռնկութիւնն կատա-
րեալ բարի ասեն:

1) 2. «անապատ»: Այս երկու բառերի շփոթ ընթերցուած ունի և
Խորենացին. «իսկ երանելին նունէ ել գնաց աշակերտել զայլ ևս գաւառսն
Վրաց յանապակ լեզուէն (Բ. 86) Սանահնի ներսէս գրչի օրինակը՝
յանապատ:

- ՂԶ. Գաւիանոսը՝ ասեն զհոգիս մարդկանս թէ ցանկութեամբ շրջելով ի մարմինս իջանեն:
- ՂԷ. Առիանգելիար, որք ասեն աւետաւոր հրեշտակն մարմնացաւ ի կուսէն և պաշտեն զնա: Եւ զեկեղեցիս, և զնշխարս սրբոց, և զքահանայս արհամարհեն: Եւ զցաւս, և զհարուածս, զոր աստուած պարգևեաց մարդկան վասն թողութեան մեզաց, զայն ի դիւաց ասեն: Եւ զցաւս, և զհիւանդութիւնս փոփոխելիս համարին, և փախչին ի հիւանդաց, որ է մեծ չար և սկիզբն ուրացութեան աստուծոյ: Սորա և զդեղս հատանեն յանուն դիւաց և հրեշտակաց, գրելով զանուանս նոցա: 1)
- ՂԸ. Սարէլ Լիբացին՝ շիտթէ Գ. անձինս և մի ասէ՝ Գ. անուամբ:
- ՂԹ. Սոփրոնիոս՝ զԲանն ազգամամբ ասէ բնակեալ ի կոյսն:
- Ճ. Մանի՝ Բ. նիւթս և Բ. բնութիւնս ասէ:
- ՃԱ. Վաղենտինացիքն՝ Է. իշխանութիւնս և Է. երկինս ասէ:
- ՃԲ. Մարկիոնացիքն՝ Գ. հակառակ էութիւնս զնեն և տհաճ են ընդ արարածս:
- ՃԳ. Թէոփորիոսս՝ Բ. երեսս ստեղծանէ ի Քրիստոս և նշովակից առնէ զմարդն Բանին աստուծոյ:
- ՃԴ. Պորփիր՝ բազում հայհոյութիւնս հնչեաց յարարչութիւնն, զոր ստակալի է ասելն:
- ՃԵ. Եւտոտթէ՝ իստեաց զամուսնութիւն և զմիս ուտելն:
- ՃԶ. Եւտիքէս՝ զմարմինն յերկնից ասաց բերեալ:
- ՃԷ. Մարկեղոս՝ ազգումն ասաց զբանն ի մարմնի, և ոչ էութեամբ աստուած:
- ՃԸ. Կեղեսաիանոսը՝ զծնունդն և զչարչարանքն սոսկ մարդոյն ասեն, վասնորոյ անխտիր հաղորդին:
- ՃԹ. Մոնղացիք՝ զկենդանագիր պատկերն Քրիստոսի ոչ ընդունին:

1) 2. « յանուն դիւաց, և հրեշտակաց գրելով զանուանս նոցա »

- ՃԺ. Ատրուիէս՝ .Գ. երկին ասաց և .Գ. իշխանութիւնս:
- ՃԺԱ. Մարկեղ Գաղատացի՝ զմարմինն Քրիստոսի յերկրի թա-
ղեալ ասէ տակաւին:
- ՃԺԲ. Գէորգէոս Փղաւագրոս՝ յաւելուած Արիոսի:
- ՃԺԳ. Մաքսէնոէս և Գայինէ և Ուրսակէս և Վաղէնոէս՝ զնոյն
ասացին՝ զԱրիոսին:
- ՃԺԴ. Ելկեսացիքն՝ ասեն թէ ոչինչ է օգուտ յանուն մեռելոյն
պատարագ և աղօթք և ողորմութիւն ի կենդանեաց, որք
մեղօք գնացին:
- ՃԺԵ. Բարդեճան՝ ասաց թէ մարմնոյն Ադամայ ի հող դառ-
նալն, զի արարածն անցական է:
- ՃԺԶ. Բերիղգեղոս. ասաց պիղծն, թէ Քրիստոս յառաջքան
զմարդանալն չէր անձամբ և գոյութեամբ, և ոչ իւր սեպ-
հական 1) աստուածութիւնն, այլ հօրն է և ի նմա բնա-
կեաց 2) կամաւ հօրն:
- ՃԺԷ. Ելէոս՝ ասաց զհոգին մահկանացու:
- ՃԺԸ. Հելեսացիք՝ խոտեն զամենայն գրոց բանս, և ունին գիրս,
և ասեն զնա ի յերկնից անկեալ: Եւ ասեն, թէ որ հաւատայ
յոյս գիրս՝ թողութիւն գտանէ այն մեղացն, զոր ասաց
Քրիստոս, թէ ոչ ունի թողութիւն: Սոքա թողուն և յեր-
կինս հանեն հակառակ առաքելոյն Պօղոսի:
- ՃԺԹ. Որիւնս՝ օրինադրեաց ոլոռն ոչ ուտել, զի զհօր սերմ՝
ասէ, ուտէ այնպիսին:
- ՃԻ. Սափէս ասաց՝ հակառակ ինչ ոչ գոյ:
- ՃԻԱ. Եպիկուրոս՝ զաշխարհս անեղ ասաց:
- ՃԻԲ. Արիստոտէլ՝ զնախախնամութիւն մինչև յարեգակն և ի
լուսինն և յաստեղս ասաց, և անտի 3) ի խոնարհ՝ արուես-
տարանաց և արուեստարանից, և զհոգիս մարդկան մահ-
կանացու ասաց:

1) 2. Ս ե փ հ ա կ ա ն .

2) 2. բ ն կ ե ց .

3) 2. անդի .

- ձԻԳ. Ճեմականքն ոչ համարին զոք արժանի խօսելոյ՝ սնեալք
յամբարտաւանութեան:
- ձԻԴ. Շնականքն որով հնապարտք էին:
- ձԻԵ. Հեթանոսականք՝ զոմանս ի զիւաց չար և զկէսս բարի
անուանէին, և կոչեն զնոսա Անդրազինէս:
- ձԻԶ. Պիհոնացիք՝ ասացին ամենայն ինչ ընդդիմակ ունի:
- ձԻԷ. Փեքսեա՝ ընդդիմակս արար ընդդէմ՝ ճշմարտութեանն:
- ձԻԸ. Քրիստոս՝ այնմ լուծմունս արար:
- ձԻԹ. Հիմենէս և Փիլիտէս՝ ասացին թէ յարութիւն արդէն
եղեալ է:
- ձԼ. Բորբոսք, որ ասին Տղմայինք, զամենայն մեղս անխտիր
գործեն:
- ձԼԱ. Աղօթականք՝ ասեն թէ ոչ կարէ մկրտութիւն զմեղս
սրբել առանց աղօթից:
- ձԼԲ. Մարկալանացիք. կանայքն մկրտութիւն առնեն, և յա-
րութիւն ոչ ասեն:
- ձԼԳ. Մոնտանոս փոխւգացի՝ զինքն ասաց հոգին սուրբ և կա-
նամբք շրջէր պղծովք:
- ձԼԴ. Սաղքատինոսք՝ զամուսնութիւնն պոռնկութիւն ասեն և
կանանց յարութիւն ոչ խոստովանին:
- ձԼԵ. Նաւատիանոս հռոմայեցին. զապաշխարութիւն ոչ ընդու-
նին, որք ի հալածանսն գլորեցան:
- ձԼԶ. Բասիլիդէս ասէ, թէ Քրիստոս եկն բնակեցաւ ի Յի-
սուս:
- ձԼԷ. Կերինթացիք. կերինթոս աշխարհաւ եգիպտացի և ազ-
գաւ սառակինոս: Սա բազում գրեւովք եկն ի կողմանս
ասորոց՝ բնակեցաւ առ կնոջ միում: Սա ելեալ ի տանիս
կոչէր զօգային դէսն յօգնականութիւն և ի բարկութենէն
աստուծոյ անկեալ ի տանեացն սատակեցաւ: Եւ առեալ
կինն զինչսն՝ գնեաց մանուկ մի Մանի անուն և ետ յու-
սումն փիլիսոփայութեան: Եւ եղև այր խօսող և գրեաց
սա աւետարանն և գոչեաց Թով(մ)այի, և ասաց փասն
Քրիստոսի, թէ միտս և հոգի ոչ ունէր: Եւ Բ. սկզբունս

ասաց՝ 1) Ինքի թ և խաւար, և աստուած՝ ասէ, առանց
Ինքի թոյ չկարէր ինչ առնել:

ձԼԸ. Սատեռնելիոս՝ խոտեաց զամուսնութիւն և բամբասէ
զարարիչն արուի և իգի:

ձԼԹ. Ուրսակէս և Վաղենտէս և Գայիոն՝ արարած ասեն զոր-
դին աստուծոյ՝ յետ ժամանակի:

ձԽ. Միւս Կերինթոս ասէ՝ Յիսուս ի Մարիամայ (և) Յովսեփայ
ծնեալ ըստ կարգի ամենայն մարդկան, և զմարմինն ա-
պականացու, և Քրիստոս ի վերուստ եկեալ բնակեցաւ ի
Յիսուսն: Եւ զարքայութիւն մարմնապէս խոստովանին ի
վերայ երկրի, և ամուսնութիւն յետ յարութեանն:

ձԽԱ. Սկէբանոս և Թէոդոտոս և Արտեմիոս և Մարկելոս՝
սոսկ մարդ ասացին զՔրիստոս:

ձԽԲ. Թէոդոսիանոսք. Թէոդոս ոմն եպիսկոպոս յեգիպտոս
Հանդերձ բազում եպիսկոպոսօք սկսաւ թիւրել զկրօնս ե-
կեղեցւոյ և ուրանալ զյարութիւն մեռելոց: Իսկ Թէոդոսի
թագաւորին աղօթիւք՝ յարեան .և. մանկունքն յսփեսոս,
և յամօթ եղեն:

ձԽԳ. Սփիտացիքն՝ զազիրս բարբառին, զոր և ասել աղտեղի է:

ձԽԴ. Մծղնէացւոց աղանդն ի Պիթագորականացն բուսաւ և
զօրացաւ: Երթեալ բանակեցան առ Պիսիդեաւ, և զոր ինչ
գործեն գարշելի է խօսել մեզ: Եւ անունք աղանդոցն ա-
նուանեն Գունգուշեանք, Սղեանք, Արեգակնօղ 2) Բ.Ն.Նա-
րակելք:

ձԽԵ. Դիոդոր՝ տարսոնեաց եպիսկոպոս, մարդ սոսկ ասաց
զծնեալն ի Մարիամայ մինչև ի մկրտութիւնն: Եւ յիջա-
նել Հոգւոյն՝ շնորհօք արժանացաւ որդի աստուծոյ կոչիլ:
Եւ թշնամանս Համարեալ է զխաչն Տեառն, որով փրկեցաքն:

ձԽԶ. Թէոդորոս Մանուեստացի՝ աշակերտ Դիոդորայ, ասաց
սոսկ մարդ զծնեալն ի Մարիամայ, և զի յաղթող եղև

1) 2. «արաց»:

2) 2. «Արգկնօղ»:

ամենայն ախտից և ճգնեցաւ՝ պատուեցաւ քան զարարածս և արժանացաւ լինել տաճար բանին աստուծոյ:

ՃԽԷ. Նեստոր պիղծ՝ անախորացի, աշակերտ Թէոգորայ Մանուէստացւոյ, ոչ ասէ ծնեալ զաստուածն բանն ի Մարիամայ և ոչ ասէ զնա աստուածածին, այլ մարգածին:

ՃԽԸ. Թէոգորիտոս՝ եպիսկոպոս Կիւրիս քաղաքի, աշակերտ Նեստորի: Ասէ՝ թէ աստուած ոչ եղև մարմին, այլ յարգանդի կուսին բնակեցաւ. առնթեր գոլով մարմին էստեղծ և յետ ծնանելոյն միացաւ աստուած Բանն, և բրնութիւնքն յատկապէս մնացին: Եւ սոսկ մարգ. ասէ չարչարեալ, զոր և պտուղ մարդկային բնութեանս ասէր:

ՃԽԹ. Լևոն, Հռոմայ հայրապետն, տուն ասաց շինեալ առ ի Մարիամայ ծնեալ մարմինն, և Ք. բնութիւն ասէ, և սոսկ մարգ չարչարեալ ասէ:

ՃԾ. Քաղկեդոնի ժողովն զԼևոնի
Ք. բնութիւնս անխառնելիս ասացեալ ի Քրիստոս:

ՃԾԱ. Մարտինոս՝ Հռոմայ պապ, Ք. կամս և Ք. ներգործութիւնըս յաւել ի Քրիստոս (ասէ) 1):

ՃԾԲ. Մաքսիմոս՝ մինակեց շնկեց, զնոյն խոստովանեաց:

ՃԾԳ. Քաղերթական, որ է արիւնարբուաց. թագաւոր ոմն յունաց աշխարհէն պատահեաց պիղծ աղանդին Պոլիկենոց և ոչ կարաց դարձուցանել զնոսա յաղանդէն իւրեանց. հալածեաց զնոսա անդր քան զլեառն Կովկաս: Եւ կին մի առաջնորդէր նոցա՝ Մարէ անուն, կախարգ և կունդ: Չարագործացն բարի առնէր և բարեգործացն՝ պատուհաս, և զկանայս հասարակաց ուսուցանէր, և աւուրս Ք. որոշե(ա)լ— զոր մեք հասարակաց կոչեմք— զայն սատանայականս անուանէր, և ի նոսա հեղուլ արիւն մարդոյ բարի ասէր, և որ ուտէ և ըմպէ զարիւն մարդոյ՝ այն արդարութիւն: Եւ յազգմանէ սատանայի տեսիլ տեսանէր և

1) Այս «ասէ»ն աւելորդ է:

մանկունս փողոտէր և ասէր, թէ նորա հոգիքն գան ի տեսիլ կախարդաց:

ՃԾԴ. Ապա կին մի Շէթի անուն, այնր աղանդոյն, ելեալ զկնի թուրքացն եկն ի Հայո, և Պօղ ոմն յԱրարատեայ գաւառէն, որ աշակերտեալ էր սրբոյն Եփրեմի, առեւանդեաց զկինն, և խառնակեցաւ աղանդն ընդ քրիստոնէութիւնս: Զարեգակն Քրիստոս ասէին՝ ոչ մեռեալ և ոչ յարուցեալ, և վասն այնորիկ ծոմանան ի կիրակէի: Եւ եկեալ տուրն Եփրեմ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն և անէ՛ծ զնա և գնաց:

ՃԾԵ. Կողմականք, այսինքն խոտորեալք, սորա խաբեալք ի սուտ մարգարէից հաւատան և սուտ առաքելոյն և սուտ վարդապետաց, և պաշտեն զստութեան հոգին: Զբազմութեան վկայիցն սաղմոս¹⁾ ոչ ընդունին և ասեն թէ նորա ոչ կարեն բարեխօսել առ աստուած վասն մարդկան:

ՃԾԶ. Ազօրականք, այսինքն Քաղցրականք՝ սորա զԱննա՝ զԱստուածածնի զմայրն և զԵղիսաբեթ ի հոգւոյն սրբոյ ասեն յղացեալ:

ՃԾԷ. Եւտիքէս՝ վախուցեալ յերկուցն բնութեանցն՝ զտէրունական մարմինն ոչ ի մեր բնութենէս ասաց և ոչինչ առեալ ի Մարիամայ, այլ որպէս կամեցաւ՝ ասէ, և ուստի կամեցաւ ըստ աստուածային կարողութեանն, բայց ծնաւ՝ ասէ, ի Մարիմայ²⁾, այլ ոչ ի Մարիամայ:

ՃԾԸ. Իսկ Յուլիոս առաւել վախչելով ի քաղկեդոնականացն՝ գոյթակղեցաւ, զի ասաց եթէ մարմինն Քրիստոսի փոխեցաւ և եղև ի միաւորութեանն, որ յարգանդին, որպէս զբանն բնութեամբ, և թէ՛ ոչ է արարած, և ոչ չարչարելի, և ոչ բովանդակելի, և ոչ մահկանացու, և թէ՛ երևումն առաջօք էր: Եւ ոմանք յաշակերտաց նորա որպէս թէ ի նմանէ ուսեալք ասեն, թէ յորժամ պատէր խան-

1) 2. «սղս»: Թերևս՝ «աղս» = աղօթս:

2) 2. «ի մարիմայ»:

Ճարրօք ի մարին՝ նոյն մարմինն յաթոռ փառաց էր, և յոր-
ժամ էր ի բազկաց ¹⁾ ծերունոյն, նոյնպէս տղայաձև յաթոռ
փառաց հանգչէր: Սոյնպէս առեն և ամենայն ուրեք, և
ասեն թէ որ ինչ յօրէնօն գրեալ է վասն քաղցի և ծա-
րաւոյ, և վաստակի, և ննջելոյ, ոչ վերաբերի ի մարդկու-
թիւնն, այլ յաստուածութիւնն: Եւ աստուածութիւնն ըն-
կալաւ զայն ամենայն կամաւորութեամբ, զի կամքն՝ որ ի
Քրիստոս, աստուածային էր: Վասն այսորիկ Յուլիոս երկ-
րորդ Մանի անուանեցաւ:


Այլ մեք ընդ ճշմարտութիւնն գնալով, փառաւորեսցուք
զՔրիստոս աստուած, յաւիտեանս ամէն:


Վ Ե Ր Զ:

1) Ա յսպէս 2. ում:

իր-
Յոս
և
ճա-
կու-
րն-
որ ի
երկ
ցուք

ԳՐԱՆԵՆԷ 50 ԿՈՊԵՆԷԿՈՒՆԷ





Wien, den 24. Juli 1890.

Hochwürden!

1. Brosset, Collection d'historiens arméniens, sind nur zwei Bände erschienen. Ich habe sie bei einer grossen Buchhandlung bestellt. Sie wird hoffentlich dieselben finden.

2. Der betreffende Artikel bezieht sich: Մարտիկի Բարսեղի: Der Verfasser ist: Howsepian Dr. Garegin. Der Artikel ist erschienen: Ara rat, 1899, Nr. V. S. 211-216; Nr. VI. S. 260-64; Nr. VII. 315-320; Nr. IX. S. 408-413; Nr. X. + XI, S. 469-480. Die Fortsetzung folgt, aber sie ist bis jetzt (ich habe die 5 Nummern dieses Jahres vor mir) noch nicht erschienen.

Sein Endresultat ist: Մարտիկի Բարսեղի hat sein Werk im Jahre 633-971

719-739

726/7 (Seite 480)

geschrieben. Wie mir P. Dashian gesagt hat, Մարտիկի Բարսեղի hatte mit dem Häsienbuche nichts zu thun. — Մարտիկի ~~to~~ oder Մարտիկի Երտարը ist dieselbe Person mit Մարտիկի Բարսեղի; so hat mir P. Dashian gesagt und so steht es auch in Howsepian's oben erwähnten Artikel (S. 263).

3. Leider ist bin nicht im Stande Ihnen eine Übersetzung der Asovi-Stücke aus Keismavurg to 1706 zu besorgen, denn wir haben bis jetzt diese Auflage Keismavurg's nicht.

Ich schicke unter X beiliegend ein von dem Verfasser gewidmetes M. jener Studien, unter welchen sich auch Մարտիկի findet.

Glochahtend
P. Barnabas Milesi (Kadjian)

Venise 13 Mars 1500

Monsieur l'Abbé ,

En transcrivant je vous envoie le document
que vous m'avez demandé ; je ne veux pas en
vous indiquer aucune récompense, si vous vou-
lez de votre part m'envoyer quelqu'un de vos
publications sur les choses arméniennes, j'en
vous serais très reconnaissant.

Agreez...

vosre dévoué

P. Basile D. Sargisjan
Mechitariste

